Ի՞ՆՉ Է ԳԱՂՏՆԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ՎԱՐԱԿԸ (LTBI)

ԲՈՒԺԱՌՈՒԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ



(Armenian)

County of Los Angeles Public Health

Բովանդակություն

1. Ի՞նչ է գաղտնի (լատենտ) տուբերկուլոզային վարակը (LTBI) 5

2. Ո՞րն է գաղտնի տուբերկուլոզային վարակի և տուբերկուլոզ հիվանդության տարբերությունը 5

3. Ինչպե՞ս են տուբերկուլոզի մանրէները հայտնվում մարմնի մեջ 6

4. Ո՞վ ունի գաղտնի տուբերկուլոզային վարակ ձեռք բերելու ավելի մեծ հավանականություն 6

5. Ինչպես է ախտորոշվում գաղտնի տուբերկուլոզային վարակը 7

6 . Գաղտնի տուբերկուլոզային վարակի բուժումը 8

7. Որքա՞ն ժամանակ պետք է ընդունեմ գաղտնի տուբերկուլոզային վարակի դեղերը 9-11

8. Գաղտնի տուբերկուլոզային վարակի բուժման կարևորությունը՝ ակտիվ տուբերկուլոզ հիվանդությունը կանխելու համար 12

9. Ինչու է կարևոր ընդունել գաղտնի տուբերկուլոզային վարակի բոլոր դերեղը 12

10. Մնունդ, որը պետք է ուտել, երբ ընդունում եք գաղտնի տուբերկուլոզային վարակի դեղեր 13

11. Ինչպես հոգ տանել ձեր մասին. մարզանք, շնչառություն և ինքնախնամք 14

12. Հիվանդների վկայություններ 15

13. «Մենք ենք տուբերկուլոզը». տուբերկուլոզը վերապրածներ և շահերի պաշտպաններ 15

Հաճախակի տրվող հարցեր 16

Տեղեկություններ Հանրային Առողջության տուբերկուլոզի կլինիկայի մասին 17



1. Ի՞նչ է գաղտնի (լատենտ) տուբերկուլոզային վարակը (LTBI)

- Տուբերկուլոզային վարակ ունեցող մարդկանց օրգանիզմում կա տուբերկուլոզի մանրէ, բայց նրանք չունեն տուբերկուլոզ հիվանդություն: **«Գաղտնի»** կամ **«Լատենտ»** բառերը մեկ բառեր են **«չգործող»** տուբերկուլոզային վարակի համար:
- Մանրէները կարող են թաքնված մնալ ձեր մարմնում ու լինել «քնած», և արդյունքում դուք չեք հիվանդանում կամ դրանք փոխանցում ուրիշներին: Սակայն եթե ձեր օրգանիզմը թուլանա, մանրէները «կարթնան», **կակտիվանան** և ձեզ կհիվանդացնեն: Սա տուբերկուլոզ հիվանդությունն է: Ցանկացած մարդ կարող է ձեռք բերել տուբերկուլոզի չգործող մանրէներ:
- Բուժումն օգնում է գաղտնի **չգործող** տուբերկուլոզ ունեցող մարդկանց հետագայում խուսափել տուբերկուլոզով հիվանդանալուց:

2. Ո՞րն է գաղտնի տուբերկուլոզային վարակի և տուբերկուլոզ հիվանդության տարբերությունը



Հավելյալ տեղեկություններ՝ https://www.cdc.gov/tb/ (Armenian)



Տուբերկուլոզի բակտերիաներ

3. Ինչպե՞ս են տուբերկուլոզի մանրէները հայտնվում մարմնի մեջ

Տուբերկուլոզի մանրէները կարող են տարածվել օդում, երբ վատ օդափոխվող սենյակում ակտիվ տուբերկուլոզով հիվանդը հազում, փռշտում, ծիծաղում, խոսում կամ երգում է:

Եթե դուք շնչեք այդ օդը, մանրէները կարող են հայտնվել ձեր մարմնում:

Սկզբում տուբերկուլոզի մանրէները կարող են քնած մնալ ձեր մարմնում: Սա կոչվում է «գաղտնի տուբերկուլոզային վարակ», և այն ձեզ չի հիվանդացնում կամ չի փոխանցվում այլ մարդկանց: Սակայն, եթե ձեր մարմինը թուլանա և չկարողանա լավ պայքարել մանրէների դեմ, տուբերկուլոզի մանրէները կարող են «արթնանալ» և ձեզ հիվանդացնել: Սա կոչվում է **ակտիվ** տուբերկուլոզ:

4. Ո՞վ ունի գաղտնի տուբերկուլոզային վարակ (LTBI) ձեռք բերելու ավելի մեծ հավանականություն

Ցանկացած մարդ կարող է ձեռք բերել տուբերկուլոզի չգործող մանրէներ: Ավելի հավանական է, որ դուք ձեռք կբերեք դրանք, եթե կա հետևյալ գործոններից մեկը.

Ծնվել, ճամփորդել կամ բնակվել եք (ավելի քան 1 ամիս) մի երկրում, որտեղ տուբերկուլոզի ցուցանիշները բարձր են:

Պատրաստվում եք ընդունել կամ արդեն ընդունում եք դեղամիջոցներ, որոնք թուլացնում են ձեր պաշտպանությունը վարակների դեմ, օրինակ՝ քաղցկեղի բուժումը:

Կյանքի որևէ պահի սերտ շփում եք ունեցել վարակիչ տուբերկուլոզով հիվանդի հետ:

Անօթևան եք կամ գտնվում եք բանտում կամ նախկինում եղել եք այս վիճակներից մեկում:

Հավելյալ տեղեկություններ՝
hhttps://www.cdc.gov/tb/media/Question_Answers_About_TB_English.pdf
https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/TB-Risk-Assessment.aspx

5. Ինչպես է ախտորոշվում գաղտնի տուբերկուլոզային վարակը

Գաղտնի տուբերկուլոզային վարակի թեստավորումը օգնում է մարդկանց առողջ մնալ, հատկապես, եթե նրանց շրջապատում եղել է կամ կա **ակտիվ** տուբերկուլոզով հիվանդ: Որոշ մարդկանց անհրաժեշտ է միայն մեկ թեստ, բայց որոշներն էլ հնարավոր է, որ ամեն տարի թեստ հանձնելու կարիք ունենան, եթե աշխատում են բարձր ռիսկի պայմաններում, ունեն առողջական խնդիրներ, ախտանիշներ կամ շփվել են ակտիվ տուբերկուլոզով հիվանդի հետ:

Երկու տեսակի թեստեր կան, որոնք կարող են որոշել՝ արդյոք մարդն ունի գաղտնի տուբերկուլոզային վարակ

Տուբերկուլոզը (TB) հայտնաբերող արյան թեստ

Տուբերկուլոզը (TB) հայտնաբերող մաշկի թեստ

Հավելյալ տեղեկություններ՝
https://www.cdc.gov/tb/testing/blood-test.html#cdc_testing_how_to_get_tested-how-to-get-tested

6. Գաղտնի տուբերկուլոզային վարակի բուժումը

Ինչո՞ւ պետք է ես բուժվեմ

Գաղտնի (լատենտ) տուբերկուլյոզային վարակի դեպքում տուբերկուլոզի մանրէները կարող են մնալ չգործող, երբ առաջին անգամ դրանք մտնում են ձեր օրգանիզմ: Այս փուլում դուք ձեզ հիվանդ չեք զգում, որևէ ախտանիշ չեք ունենում և վարակը չեք փոխանցում ուրիշներին: Բայց, եթե ձեր իմունային համակարգը թուլանում է, բակտերիաները կարող են ակտիվանալ և ձեզ հիվանդացնել տուբերկուլոզով:

Գաղտնի տուբերկուլոզային վարակի դեմ դեղեր ընդունելն օգնում է ոչնչացնել տուբերկուլոզի մանրէները, որպեսզի դրանք «չարթնանան» և ձեզ չհիվանդացնեն: Դեղամիջոցը ձեզ առողջ է պահում, նաև օգնում է պաշտպանել ձեր ընտանիքն ու ընկերներին:

Հավելյալ տեղեկություններ՝
https://www.cdc.gov/tb/media/Question_Answers_About_TB_English.pdf

7. Որքա՞ն ժամանակ պետք է ընդունեմ գաղտնի տուբերկուլոզային վարակի դեղերը

Եթե մարդն ունի թաքնված տուբերկուլոզային վարակ, նա ընդունում է դեղամիջոցներ, օրգանիզմն առողջ պահելու համար: Մարդկանց մեծ մասը կարիք է ունենում դեղերն ընդունել 3-4 ամիս: Սակայն երբեմն ոմանք կարիք են ունենում դեղերն ընդունել 3-9 ամիս՝ կախված ակտիվ տուբերկուլոզի ազդեցությունից, առողջական վիճակից և բժշկի խորհուրդներից:

Ահա գաղտնի տուբերկուլոզային վարակի դեղամիջոցների մի քանի օրինակ.

Գաղտնի տուբերկուլոզային վարակի բուժակարգը

	ԴԵՂԱՄԻՋՈՑ		ԺԱՄԱՆԱԿ	ՀԱՃԱԽԱ-ԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ԴԵՂԱՉԱՓԵՐԻ ԸՆԴՀ. ԹԻՎԸ	ԴԵՂԱՉԱՓ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
Նախընտրելի	**ԻԶՈՆԻԱԶԻԴ[†] ԵՎ ՌԻՖԱՊԵՆՏԻՆ[#] (3HP)**		3 ամիս	Շաբաթը մեկ	12	**Չափահասներ և ≥12 տարեկան երեխաներ** ԻԶՈՆ՝ 15 մգ/կգ՝ կլորացրած հաջորդ 50 կամ 100 մգ-ը, Առավելագույնը 900 մգ ՌԻՖԱՊ՝ 10-14.0 կգ՝ 300 մգ 14.1-25 կգ՝ 450 մգ 25.1-32.0 կգ՝ 600 մգ 32.1-49.9 կգ՝ 750 մգ ≥50.0 կգ՝ առավելագույնը 900 մգ
						2-11 տարեկան երեխաներ ԻԶՈՆ[†]՝ 25 մգ/կգ, առավելագույնը 900 մգ ՌԻՖԱՊ[#]՝ տես վերևում
Նախընտրելի	**ՌԻՖԱՊԵՆՏԻՆ[§] (4R)**		4 ամիս	Ամեն օր	120	**Չափահասներ**՝ 10 մգ/կգ՝ առավելագույնը 600 մգ
						Երեխաներ՝ 15-20 մգ/կգ[‖]՝ առավելագույնը 600 մգ
Նախընտրելի	**ԻԶՈՆԻԱԶԻԴ[†] ԵՎ ՌԻՖԱՊԵՆՏԻՆ[§] (3HP)**		3 ամիս	Ամեն օր	90	**Չափահասներ** ԻԶՈՆ[†]՝ 5 մգ/կգ՝ առավելագույնը 300 մգ ՌԻՖԱՊ[§]՝ 10 մգ/կգ՝, առավելագույնը 600 մգ
						Երեխաներ ԻԶՈՆ[†]՝ 10-20 մգ/կգ[#]՝ առավելագույնը 300 մգ ՌԻՖԱՊ[§]՝ 15-20 մգ/կգ՝ առավելագույնը 600 մգ
Այլընտրանքային	**ԻԶՈՆԻԱԶԻԴ[†] (6H/9H)**		6 ամիս	Ամեն օր	180	**Չափահասներ** Ամեն օր՝ 5մգ/կգ՝ առավելագույնը 300 մգ Շաբաթը 2 անգամ՝ 15 մգ/կգ՝ առավելագույնը 900 մգ
				Շաբաթը 2 անգամ[¶]	52	
			9 ամիս	Ամեն օր	270	**Երեխաներ**՝ Ամեն օր՝10-20 մգ/կգ[#]՝ առավելագույնը 300 մգ Շաբաթը 2 անգամ՝ 20-40 մգ/կգ[#]՝ առավելագույնը 900 մգ
				Շաբաթը 2 անգամ[¶]	76	

Սովորաբար տրվում է վիտամին B6, սակայն երբեմն տրվում է ավելի ուժեղ դեղամիջոց:

Հավելյալ տեղեկություններ՝ https://www.cdc.gov/tb/treatment/inactive-tuberculosis.html

Որո՞նք են գաղտնի տուբերկուլոզային վարակի դեմ դեղերի տարածված կողմնակի ազդեցությունները

Բոլոր դեղամիջոցները, նույնիսկ վիտամինները, երբեմն կարող են կողմնակի ազդեցություններ առաջացնել՝ չնայած մարդկանց մեծ մասը դրանք ընդունում է առանց խնդիրներ ունենալու: Ռիֆամպին դեղամիջոցի անվնաս կողմնակի ազդեցությունն այն է, որ այն կարող է ձեր արցունքները, քրտինքը և մեզը դարձնել նարնջագույն-կարմիր: Այս ազդեցությունը նորմալ է և կանհետանա բուժումն ավարտելուց հետո: Սակայն այն կարող է ընդմիշտ ներկել փափուկ կոնտակտային նոսպնյակները (լենզերը). ուստի ձեր բժիշկը կարող է խորհուրդ տալ ձեզ խուսափել բուժման ընթացքում դրանք կրելուց:

Եթե կարծում եք, որ կողմնակի ազդեցություն է առաջացել, անմիջապես զանգահարեք ձեր բժշկին կամ բուժակին: Հնարավոր է, որ նրանք ձեզ ասեն դադարեցնել տուբերկուլոզի դեղերն ընդունելը կամ վերադառնալ կլինիկա՝ նորից հետազոտվելու:

Տարածված կողմնակի ազդեցություններից են՝

- Ցան
- Սրտխառնոց
- Փսխում
- Փորլուծություն
- Հոգնածություն
- Գրիպին բնորոշ աշխատնիշներ
- Գլխապտույտ

Հավելյալ տեղեկություններ՝ https://www.cdc.gov/tb/webcourses/TB101/page16747.html

(Armenian)

Մինչև բուժումը սկսելը

- Անպայման բուժակին կամ բժշկին ասեք բոլոր դեղերի անունները, որոնք ընդունում եք: Որոշ դեղեր կարող են խանգարել գաղտնի տուբերկուլոզի բուժմանը, ինչպես նաև կարող են առաջացնել կողմնակի ազդեցություններ, օրինակ՝ սրտխառնոց: Այս տեղեկություններն ասելը օգնում է կանխել խնդիրները և ապահովում է, որ ձեր բուժումը լինի անվտանգ և արդյունավետ:

Եթե դուք օգտագործում եք հակաբեղմնավորիչ հաբեր, խոսեք ձեր բուժակի կամ բժշկի հետ նախքան որևէ նոր դեղ ընդունելը: Որոշ դեղեր կարող են ազդել հակաբեղմնավորիչների արդյունավետության վրա:

Եթե հղի եք, կարծում եք՝ հնարավոր է, որ հղի լինեք, կամ եթե կրծքով կերակրում եք, այդ մասին հայտնեք ձեր բուժակին կամ բժշկին: Սա կօգնի անվտանգ պահել ձեզ և ձեր երեխային:



Հավելյալ տեղեկություններ՝ https://www.cdc.gov/tb/treatment/inactive-tuberculosis.html

(Armenian)

8. Գաղտնի տուբերկուլոզային վարակի բուժման կարևորությունը՝ ակտիվ տուբերկուլոզ հիվանդությունը կանխելու համար

Գաղտնի տուբերկուլոզային վարակի բուժումը կանխում է տուբերկուլյոզային հիվանդությունը, քանի որ՝

- Չբուժվելու դեպքում գաղտնի տուբերկուլոզային վարակ ունեցող10 մարդուց 1-ը կհիվանդանա ակտիվ տուբերկուլոզով: Ակտիվ տուբերկուլոզը կարող է փոխանցվել այլ մարդկանց և կարող է մահացու լինել:

- Թույլ իմունային համակարգ, շաքարային դիաբետ, քաղցկեղ կամ ՄԻԱՎ ունեցող մարդիկ կարող են ավելի հեշտությամբ հիվանդանալ տուբերկուլոզով: Նրանց օրգանիզմն ավելի դժվար է պայքարում տուբերկուլոզ առաջացնող մանրէների դեմ:

- Ակտիվ տուբերկուլոզով հիվանդացած մարդկանց մեծ մասը դեղորայք չի ընդունել գաղտնի տուբերկուլոզի դեմ: Դեղերը շուտ ընդունելը կարող է օգնել ձեզ հետագայում առողջ մնալ:

9.Ինչո՞ւ է կարևոր ընդունել գաղտնի տուբերկուլոզային վարակի բոլոր դեղերը

- Գաղտնի տուբերկուլոզային վարակ ունենալը նշանակում է, որ ձեր օրգանիզմում կան տուբերկուլոզի մանրէներ, բայց դուք հիվանդ չեք: Եթե ձեր իմունային համակարգը թուլանա, մանրէները կարող են արթնանալ և ձեզ հիվանդացնել: Բոլոր դեղամիջոցներն ընդելը կօգնի կանխել դա:

- Որպեսզի ազատվեք ձեր օրգանիզմում եղած տուբերկուլոզի մանրէներից, ընդունեք գաղտնի տուբերկուլոզի դեմ բոլոր դեղերը:

- Գաղտնի տուբերկուլյոզի բուժումն օգնում է, որ այն չվերածվի տուբերկուլոզ հիվանդության: Սա նշանակում է, որ այն չի փոխանցվի այլ մարդկանց:

- Եթե դուք կիսատ թողնեք ձեր դեղերը, տուբերկուլոզի մանրէները կարող են ավելի ուժեղանալ և ավելի դժվարությամբ վերանալ: Սա կոչվում է դեղակայուն տուբերկուլոզ, և այն ավելի դժվար է բուժվում:

ԲԱՑ ՄԻ ԹՈՂԵՔ ՈՐԵՎԷ ԴԵՂԱՉԱՓ: ԺԱՄԱՆԱԿԻՑ ՇՈՒՏ ՄԻ ԿԱՆԳՆԵՑՐԵՔ ԴԵՂԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ:

Հավելյալ տեղեկություններ՝ https://www.cdc.gov/tb/prevention/index.html

10. Սնունդ, որը պետք է ուտել, երբ ընդունում եք գաղտնի տուբերկուլոզային վարակի դեղեր

Կերեք առողջարար սնունդ, երբ գաղտնի տուբերկուլոզի դեմ դեղեր եք ընդունում: Լավ սնունդը նպաստում է, որ ձեր մարմինն ավելի արագ ապաքինվի և դեղամիջոցն ավելի լավ ազդի:

- **Սպիտակուցներով հարուս սնունդ**
  - Ձու
  - Լոբի և ոսպ
  - Ընկուզեղեն և սերմեր
  - Քիչ յուղայնությամբ միս (հնդկահավ, ձուկ, հավ)
- **Մանդանյութերով հարուստ սնունդ**
  - Հատապտուղներ
  - Ցիտրուսային մրգեր
  - Մուգ կանաչ տերևներով բանջարեղեն
- **Բարձր կալորիականություն ունեցող սնունդ**
  - Ավոկադո
  - Պանիր
  - Չզտած կաթ և մածուն
  - Չիր
  - Սև շոկոլադ
  - Գրանոլայի սալիկներ

Խմեք ավելի շատ հեղուկ, օրինակ՝ ջուր կամ կոկոսի հյութ

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները (CDC) խորհուրդ են տալիս խուսափել ալկոհոլային խմիչքներից, օրինակ՝ գինուց, գարեջրից և լիկյորից, երբ գաղտնի տուբերկուլոզային վարակի դեմ դեղեր եք ընդունում: Հարցրեք ձեր բժշկին, թե բուժման ընթացքում էլ ինչ նյութերից կամ գործողություններից պետք է խուսափեք:

Հավելյալ տեղեկություններ՝ https://www.cdc.gov/tb/treatment/inactive-tuberculosis.html

(Armenian)

11. Ինչպես հոգ տանել ձեր մասին. մարզանք, շնչառություն և ինքնախնամք

Ահա մի քանի խորհուրդ ինքնախնամքի վերաբերյալ, երբ ընդունում եք գաղտնի տուբերկուլոզի դեղեր:

Դեղերն ընդունելու ժամանակացույց
Հետևեք ձեր բուժակի և բժշկի ցուցումներին: Ընդունեք ձեր դեղերն այնպես, ինչպես նրանք ձեզ ասել են՝ դեղաչափերի ճիշտ քանակ և ճիշտ ժամերին:

Ընդունեք ուտելիքի հետ
Եթե ստամոքսի խանգարում եք ունենում, խոսեք ձեր բժշկի հետ: Հնարավոր է, որ նա ձեզ խորհուրդ տա դեղերն ընդունել սննդի հետ:

Հիշեցումներ պատրաստեք
Օգտագործեք զարթուցիչ, դեղահաբերի տուփ կամ նշումներ, որոնք կօգնեն ձեզ հիշել դեղերը պարբերաբար ընդունելը:

Ունեցեք դեղերի ցուցակ
Իմացեք, թե ինչ դեղեր եք ընդունում և ինչու:

Կողմնակի ազդեցություններ
Եթե ունենում եք որևէ կողմնակի ազդեցություն կամ ձեր բուժման վերաբերյալ հարցեր, խնդրում ենք դրանց մասին ասել ձեր բուժակին կամ բժշկին:

Լվացեք ձեր ձեռքերը
Լվացեք ձեռքերը օճառով և ջրով, հատկապես հազալուց, փռշտալուց կամ զուգարանից օգտվելուց հետո:

Բավարար չափով հանգստացեք
Բավարար չափով քունը օգնում է ձեր մարմնին ապաքինվել և ուժեղ մնալ:

Կառավարեք սթրեսը
Կատարեք հանգստացնող վարժություններ, օրինակ՝ խորը շնչել, մեդիտացիա կամ յոգա:

Գնացեք նշանակված հանդիպումներին
Անպայման գնացեք բժշկի հետ բոլոր հանդիպումներին, որպեսզի նրանք տեսնեն, թե ինչպես եք զգում, և օգնեն ձեզ հասնել լավագույն արդյունքի:

Հավելյալ տեղեկություններ՝ https://www.webmd.com/lung/tuberculosis-prevention

12. Տուբերկուլոզով հիվանդների անձնական պատմություններ

Տուբերկուլոզը դեռևս առողջապահական մեծ խնդիր է ԱՄՆ-ում: Այն կարող է պատահել յուրաքանչյուրի հետ՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղից է նա գալիս: Այս պատմություններն այն մասին են, թե ինչ է նշանակում ունենալ գաղտնի տուբերկուլոզային վարակ կամ ակտիվ տուբերկուլոզ հիվանդություն և թե ինչպես են առողջապահության ոլորտի աշխատողները փորձում կանխել դրանք:



https://www.cdc.gov/tb/stories/index.html

Սկանավորեք՝ տեսնելու տուբերկուլոզի մասին անձնական պատմությունները

13. «Մենք ենք տուբերկուլոզը». տուբերկուլոզը հաղթահարածներ և շահերի պաշտպաններ

«Մենք ենք տուբերկուլոզը» (We are TB) աջակցության և շահերի պաշտպանության համազգային կազմակերպություն է, որը ղեկավարում են անձամբ տուբերկուլոզ ունեցած մարդիկ: Նրանց առաքելությունն է ուժ տալ, կրթել տուբերկուլոզից տուժած մարդկանց ու կապեր ստեղծել նրանց համար՝ համագործակցելով կլինիկաների և բժշկական ծառայությունների մատակարարների հետ, որպեսզի բարելավեն բոլորի բուժումը, աջակցությունը և արդյունքները: Նրանք օգնում են հիվանդներին և բժիշկներին՝ պատմելով հիվանդների պատմությունները, որպեսզի օգնեն մյուսներին հասկանալ տուբերկուլոզը և իրենց շատ միայնակ չզգալ:

https://www.wearetb.com

Սկանավորեք ՝ տեսնելու «Մենք ենք տուբերկուլոզը» (We are TB)

NTCA
National Tuberculosis Coalition of America

«Տուբերկուլոզի հարցերով Ամերիկայի ազգային» միության (NTCA) առաքելությունը
«Պահպանել հանրության առողջությունը՝ նպաստելով ԱՄՆ-ում տուբերկուլոզի վերացմանը նահանգային, տեղական և տարածքային ծրագրերի համակարգված գործողությունների միջոցով»:

https://www.tbcontrollers.org
(Armenian)

Սկանավորեք ՝ NTCA-ի կայքի համար

Հաճախակի տրվող հարցեր

1. Կա՞ արդյոք ակտիվ տուբերկուլոզի դեմ պատվաստանյութ:

- Կալմետ-Գերինի բացիլը՝ ԲՑԺ-ն (անգլերեն՝ Bacille Calmette-Guérin (BCG)) ակտիվ տուբերկուլոզ հիվանդության դեմ պատվաստանյութ է, որը հաճախ տրվում է մարդկանց այլ երկրներում՝ ոչ ԱՄՆ-ում:
- Այս պատվաստանյութը լայնորեն չի օգտագործվում Միացյալ Նահանգներում հետևյալի պատճառներով.
  - Տուբերկուլոզի մանրէներով վարակվելու վտանգը ցածր է Միացյալ Նահանգներում:
  - Պատվաստանյութի արդյունավետությունը մեծահասակների թոքային տուբերկուլոզի (թոքախտի) դեմ փոփոխական է: Դուք կարող եք դարձյալ ձեռք բերել գաղտնի և ակտիվ տուբերկուլոզ, նույնիսկ եթե նախկինում պատվաստվել եք ԲՑԺ (BCG) պատվաստանյութով:
  - Պատվաստանյութի պատճառով տուբերկուլոզի մաշկային թեստի պատասխանը կարող է դրական լինել, նույնիսկ եթե դուք չունեք տուբերկուլոզ:
- Եթե տուբերկուլոզի դեմ պատվաստվել եք, այդ մասին ասեք ձեր բուժակին կամ բժշկին:

2. Արդյո՞ք Կալմետ-Գերինի բացիլի՝ ԲՑԺ (BCG) պատվաստանյութն ինձ ամբողջությամբ պաշտպանում է ակտիվ տուբերկուլոզից:

- ԲՑԺ (BCG) պատվաստանյութը չի պաշտպանում մարդկանց թոքերի ակտիվ տուբերկուլոզով (թոքախտ) հիվանդանալուց, որը հիվանդության ամենատարածված ձևն է Միացյալ Նահանգներում:

ԲՑԺ պատվաստանյութը ներարկում է, որն օգնում է մարդկանց պաշտպանել տուբերկուլոզից, սակայն այս ներարկումը միշտ չէ, որ բոլորի վրա նույն կերպ է ազդում: Երբեմն այն շատ լավ է ազդում, իսկ երբեմն՝ ընդհանրապես չի օգնում: Սա նշանակում է, որ նույնիսկ եթե մարդը ստանում է ԲՑԺ պատվաստանյութը, նա հետագայում կարող է հիվանդանալ տուբերկուլոզով:



https://www.cdc.gov/tb/vaccines/index.html

3.Արդյո՞ք ես պետք է մեկուսանամ, եթե ունեմ գաղտնի տուբերկուլոզային վարակ

Ոչ, գաղտնի տուբերկուլոզային վարակ ունեցող մարդիկ կարիք չունեն հեռու մնալու ուրիշներից: Նրանք վարակող չեն և չեն կարող տարածել տուբերկուլոզի մանրէներ: Նրանք կարող են դպրոց գնալ, աշխատել և ճամփորդել սովորականի պես: Միայն **ակտիվ** տուբերկուլոզով հիվանդ մարդիկ կարող են փոխանցել մանրէները ուրիշներին:

Հանրային Առողջության՝ տուբերկուլոզի բուժակների կլինիկայի տվյալներ

Հանրային Առողջության Ձեր բուժակի անունը՝

_____

Հանրային Առողջության Ձեր կլինիկան՝

_____

Տուբերկուլոզի կլինիկայի հեռախոսահամարը՝

_____



County of Los Angeles Public Health

DPH Public Health Centers

Nurse Only Clinic Registration Schedule

All schedules are subject to change and clinics are closed during all County holidays. The following schedule reflects Registration Hours and clinics open 30 minutes after Registration begins. Please call ahead to confirm visit hours and to schedule an appointment. Please arrive 15 minutes prior to your appointment.

Limited walk-in appointments are available on the same day. Walk-in patients should arrive as early as possible to improve the likelihood of being seen.

Nurse Only Clinic provides:

- All childhood immunizations and TB testing
- Adult immunizations for those uninsured and underinsured.
- TB testing for those in congregate living, school volunteers as well as uninsured and underinsured.
- COVID (Moderna and testing for all age groups.
- Flu Vaccines
- Mpox Vaccines

There is a $15 vaccine administration fee per patient for each visit to our Nurse Only Clinic and $30.00 for families of two or more. This fee covers all vaccines for that visit. If the child has Medi-Cal or Medicare plan, the cost is free if the patient can provide the Medi-Cal coverage card at the time of registration.

Antelope Valley SPA 1 — Antelope Valley Health Center		MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY
	AM	No Clinic	7:30-11:00	7:30-11:00	8:30-1:00	7:30-11:00
	PM	No Clinic	12:30-5:00	12:30-5:00	2:30-6:30	No Clinic

Address: 335-BEASTAVENUE #3
LANCASTER, CA93535

Business Office: (661) 471-4861
(Between Division Street& Gingham Avenue)

San Fernando Valley SPA 2 — Pacoima Health Center		MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY
	AM	No Clinic	No Clinic	No Clinic	No Clinic	7:30-11:00*
	PM	No Clinic	No Clinic	No Clinic	No Clinic	No Clinic

Address: 13300 Van Nuys Blvd
Pacoima, CA 91331

Business Office: (818) 896-1903

*Provides: COVID-19 testing, COVID-19 vaccines, TB screening, and Flu vaccine.

This clinic is only open on the first Friday of each month.

San Gabriel Valley SPA 3 — Monrovia Health Center		MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY
	AM	7:30-11:00	7:30-11:00	No Clinic	No Clinic	7:30-11:00
	PM	No Clinic	1:00-4:00	No Clinic	12:00-4:00	No Clinic

Address: 330W. MAPLE AVE
MONROVIA, CA 91016

Business Office: (626) 256-1600

Տուբերկուլոզի բուժակների կլինիկայի ժամակացույցի pdf-ը

Տուբերկուլոզի բուժակների կլինիկայի ամենանոր և ընթացիկ ժամակացույցը pdf տարբերակով տեսնելու համար սեղմեք հղումը կամ սկանավորեք QR կոդը՝

http://ph.lacounty.gov/tb/docs/nurseclinic.pdf



https://www.cdc.gov/tb/communication-resources/tb-questions-and-answers-booklet.html

(Armenian)

COUNTY OF LOS ANGELES
Public Health

(Armenian)